



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

---

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО  
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

## СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

### COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

#### 1.4 (30)

##### **Общественные и гуманитарные науки**

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

##### **Humanities and Social Sciences**

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN  
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS  
2019

## ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

### 1.4 (30)

#### **Հասարակական և հումանիտար գիտություններ**

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

**Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**  
**Издаётся по решению Ученого совета ЕГУ**  
**Published by the Resolution of the Academic Council of YSU**

**Խմբագրական խորհուրդ՝**

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան  
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան  
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան  
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան  
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան  
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան  
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան  
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան  
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան  
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան  
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան  
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան  
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան  
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան  
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան  
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան  
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

**Редакционная коллегия:**

д.ф.н., проф. Д. Петросян  
д.ф.н., проф. Л. Матевосян  
д.ф.н., проф. Ю. Аветисян  
д.ф.н., проф. А. Мурадян  
д.ф.н., проф. В. Арутюнян  
д.п.н., проф. Г. Аванесян  
д.и.н., проф. С. Мкртчян  
д.э.н., проф. А. Мнацаканян  
д.э.н., проф. А. Саргсян  
д.п.н., проф. Г. Керян  
д.ф.н., доц. Ш. Паронян  
к.ф.н., доц. Н. Варданын  
к.ф.н., доц. В. Егиазарян  
к.э.н., доц. К. Хачатрян  
к.ф.н., ассист. Н. Погосян  
к.ю.н., ассист. В. Григорян  
к.ю.н., ассист. Т. Суджян  
к.ю.н., ассист. А. Тавадьян  
к.п.н., ассист. Д. Саргсян  
к.и.н., ассист. Р. Карапетын  
к.ф.н., ассист. К. Яралян

**Editorial Board**

DSc, Prof. D. Petrosyan  
DSc, Prof. L. Matevosyan  
DSc, Prof. Y. Avetisyan  
DSc, Prof. S. Muradyan  
DSc, Prof. V. Harutyunyan  
DSc, Prof. H. Avanesyan  
DSc, Prof. S. Mkrtchyan  
DSc, Prof. H. Mnatsakanyan  
DSc, Prof. H. Sargsyan  
DSc, Prof. T. Keryan  
DSc, Associate Prof. Sh. Paronyan  
DSc, Associate Prof. N. Vardanyan  
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan  
PhD, Associate Prof. K. Khachatryan  
PhD, Assistant Prof. N. Poghosyan  
PhD, Assistant Prof. V. Grigoryan  
PhD, Assistant Prof. T. Sujyan  
PhD, Assistant Prof. A. Tavadyan  
PhD, Assistant Prof. D. Sargsyan  
PhD, Assistant Prof. R. Karapetyan  
PhD, Assistant Prof. K. Yaralyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

## Հարությունյան Ինգա

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, մագիստրանտ  
Գիտական ղեկավար՝ ասիստենտ Ա. Հայրապետյան  
Էլ. փոստ՝ [ingainga96@mailru@bk.ru](mailto:ingainga96@mailru@bk.ru)

### ՎԿԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱԼԱԾՈՂՆԵՐԻ ԴԱՐՁԸ՝ ԻՐԲԵՎ ԲԱՐՈՅԱԽՐԱՏԱԿԱՆ ՄԻՋՈՑ ՎԱՂ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Սույն հոդվածը նվիրված է քրիստոնեական դարձի գաղափարաբանությանը, վերջինիս վերաբերյալ միջնադարյան հայ իրականության մեջ տարածված պատկերացումներին՝ մասնավոր, անհատ կերպարների միջոցով: Հոդվածի շրջանակներում նպատակ ենք դրել հասկանալու հատկանշական այն սցենարները, որոնցով պայմանավորվել է դարձի գալու գաղափարը: Փորձել ենք նաև հասկանալ վկայուհիների և նրանց հալածողների՝ որպես հակադիր բևեռների միջև առկա խորը հակասությունները և ծայրահեղ տարբերությունը՝ իբրև վերջիններիս դարձի գալու կարևորագույն գործոն: Աշխատանքում փորձ է արվել նորովի մոտենալ հիշյալ հակադիր բևեռների բնութագրիչներին, գործողությունների դրդապատճառներին, կատարվող հրաշքների խորհրդաբանությանը: Ուշագրավ է, որ նման եղանակով հնարավոր է նաև որոշակի պատկերացում կազմել միջնադարյան հայ իրականության մեջ բարու, բարոյականի, հասարակական բարիքի գաղափարների մասին: Չափազանց հետաքրքիր է այս օրինակներով հասկանալ «լավ» և «վատ», «ճիշտ» և «սխալ», «բարի» և «չար» որակումների փոխատեղումներն ու ոչ նույնարժեք էությունը, մասնավորապես, հեռավոր անցյալի ընդունված բարոյական սկզբունքների տեսանկյունից: Այս և նման հարցերի անդրադառնալու համար անհրաժեշտ է այն պայմանների ու հանգամանքների իմացությունը, որոնցից ծնվել են այդ արժեքները, փոփոխվել, արմատացել կամ մոռացվել:

Միջնադարյան հայ իրականության մեջ քրիստոնեական դարձի մասին բազմաթիվ պատումներ կան, որոնցում իրենց ուրույն տեղն ունեն քրիստոնյա վկայուհիները, հրեշտակները, իշխանական անձինք: Այդ պատումներում հստակ երևում են հակադիր երկու բևեռներ, որոնց բնութագրիչները տարբեր աղբյուրներում աչքի են ընկնում իրենց չափազանցվածությամբ և հատկանիշների ծայրահեղ դրսևորմամբ: Ծայրահեղության այս սկզբունքը պահպանվում է մեզ հայտնի դարձի բոլոր պատումներում:

Հոդվածի առանցքում ներկայացված են դարձի առավել հայտնի երկու պատում՝ «Հռիփսիմեան կույսերի նահատակությունն ու Տրդատ թագավորի դարձը» և «Կիպրիանոսի դարձը»:

Հայ իրականության մեջ թերևս ամենահայտնի վկայուհիների՝ Հռիփսիմեան կույսերի մասին Ագաթանգեղոսն իր «Պատմություն Հայոց» աշխատության մեջ հետևյալ բնութագրիչներն է տալիս. «.....լեռներում մեկուսացած, բուսակեր, ժուժկալ,

պարկեշտ և սրբանվեր կանայք էին, քրիստոնեական հավատքով լի, որոնք գիշեր ու ցերեկ և ամեն ժամանակ փառավորությամբ և օրհնությամբ իրենց աղոթքը արժանավորապես դեպի վեր առ Աստված էին ուղղում: Նրանց գլխավորի անունն էր Գայանե, որն ուներ մի սան՝ աստվածապաշտ մարդու դուստրերից՝ թագավորական տոհմից, որի անունն էր Հռիփսիմե» [1]: Այս դրական և վեհ բոլոր բնորոշումներին ի հակադրություն՝ Ագաթանգեղոսի մոտ Տրդատ թագավորը ներկայանում է որպես ամբարտապան, հեթանոս, գոռոզ և եսակենտրոն միապետ, ով ամեն կերպ ուզում է հագուրդ տալ իր ցանկություններին: Տեսնելով Հռիփսիմեին՝ Տրդատը հմայվում է նրա գեղեցկությամբ և ցանկանում բռնությամբ տիրանալ նրան, սակայն մերժում է ստանում: Ապա արքան հրամայում է բերել Գայանեին և սպանելու սպառնալիքով ստիպում, որ իր սանին համոզի կատարելու արքայի հրամանը: Սակայն մայրապետը սրտապնդում է Հռիփսիմեին, պատվիրում չերկյուղել և չենթարկվել հեթանոս թագավորին [5]: Այդ խոսքերի և հակադրվելու համար արքայի մարդիկ նրան դաժան ծեծի են ենթարկում, քարերով հարվածում բերանին, կոտրում ատամները, ապա քարշ տալով հեռացնում սենյակից: Թագավորի հետ Հռիփսիմեն միայնակ է մնում, սակայն իր զորեղ ուժով ու քաջագործություններով հռչակված արքան գրեթե յոթ ժամ մաքառելուց հետո պարտվում է Սուրբ Հոգով զորացած կույսին: Պատմիչը վկայում է, որ հեռանալով պալատից՝ Հռիփսիմեն մի բարձրադիր վայրում աղոթում է, որտեղ էլ նրան գտնում և անասելի կտտանքների են ենթարկում պալատական իշխաններն ու դահիճները: Լուր ստանալով Հռիփսիմեի նահատակության մասին, թագավորը սաստիկ տրտմում է, ապա հրամայում հաշվեհարդար տեսնել մայրապետ Գայանեի հետ: Արքայի և նրա մերձավորների վրա տիրոջ պատուհասը հասավ, և արքան վայրի խոզի կերպարանք ստացավ: Նրա բոլոր մերձավորները սգի մեջ էին: Այդ ժամանակ Աստծուց տեսիլ երևաց թագավորի քրոջը՝ Խոսրովիդուխտին, և ասաց, որ 15 տարի Խոր Վիրապում պահվող Գրիգոր Լուսավորիչը կարող է միայն արքային փրկել: Լուսավորիչը նախ հողին հանձնեց կույսերի մարմինները (թեպետ 9 օր ու գիշեր նրանց մարմինները դրսում էին եղել, բայց պահպանվել էին Աստծո զորությամբ), այնուհետև պատվիրեց թագավորին ապաշխարել: 70-օրյա ապաշխարությունից հետո Սուրբ Գրիգոր Լուսավորչի աղոթքով Աստված Տրդատին վերադարձրեց մարդկային կերպարանքը [1]:

Ուշագրավ է, որ երկրորդ պատումն իմաստային ուղղվածությամբ աղերսվում է Հռիփսիմեան կույսերի մարտիրոսության և Տրդատ արքայի դարձին: Այն ներկայացնում է Կիպրիանոս հայրապետի և Հուստիանե կույսի պատմությունը: Նախապես հեթանոս, ապա քրիստոնեության պարձանք համարվող սուրբ եպիսկոպոս Քրիստոսի վկա Կիպրիանոսը<sup>1</sup> [9], ծագումով Անտիոքից, քրիստոնեական բոլոր եկեղե-

<sup>1</sup> Կիպրիանոսի և Հուստիանեի մասին վկայությունները կազմել է Պ. Ֆրանչիդե Կավալիերին: Նրանց մասին պահպանված հիշատակություններում կան որոշ անհամապատասխանություններ: Մեկ խոսվում է Անտիոքում գործունեություն ծավալած Կիպրիանոսի, մյուս դեպքում՝ Կարթագենցի Կիպրիանոսի մասին: Կարթագենցի եպիսկոպոսը հիշատակվում է 379 թվականով, այնինչ անտիոքցի

ցիների տոնակատարություններում իր տեղն ունի ամենավաղ շրջանից և քաջածանոթ է իր թողած գրական նյութերով: Երրորդ դարում ապրած փիլիսոփա հեթանոսը, որը հայտնի է եղել իբրև «քաջ ճարտախոս», «մոգ ճարտար» և «քուրմ կոռոց», ունեցել է Թասիկոս Կեկիլիոս մականունը: Ժամանակակիցների մոտ այնքան մեծ է եղել նրա համբավը, որ անգամ վախեցել են նրա ստվերից. ըստ ավանդության՝ նա այնքան հմտացած է եղել մոգության մեջ, որ դևերին և քաջքերին համարձակորեն հրամաններ է տվել, որոնք էլ առանց վարանելու կատարել են նրա կամքն ու ցանկությունները [4]:

Ստացվեց այնպես, որ Ագլաիդաս անունով մի երիտասարդ ցանկացավ Հուստիան անվամբ մի գեղեցիկ կույսի կնության առնել. ուղարկում էր թանկարժեք բազում նվերներ, գեղեցիկ հանդերձներ, ոսկի և արծաթ, բայց կույսը, անարգելով ամեն հարստություն, հետ էր դարձրել այդ բոլորը: Երիտասարդը դիմում է Կիպրիանոսին, վերջինս գործի է դնում մոգության ոլորտում ունեցած բոլոր հմտությունները: Կիպրիանոսը կույր ու խուլ մնաց Տիրոջ խաչի նշանի զորության հանդեպ և բազմաթիցս պոռնկության կատաղի դևերի ուղարկեց Հուստիանին գայթակղելու, որոնք նրա երևակայության մեջ պատկերում էին երիտասարդ Ագլավիդոսի (օտարալեզու գրականության մեջ՝ Ագլաիդաս) պատկերը, և ցանկասիրական մտքերով փորձում գայթակղել նրան, բայց սուրբ կույսը քուրձ հագնելով, ջերմեռանդ աղոթքներով ու մարմինը պահքով ու ծոմով տկարացնելով՝ հաղթում է իր մեջ առաջացած ցանկությանը, իսկ ամոթահար ու պարտված դևերը վերադառնում են Կիպրիանոսի մոտ: Երբ դևերը հայտնվում էին՝ գայթակղելու Հուստիանեին, իսկույն խաչակնքվում էր՝ ապավինելով Քրիստոսի խաչին, ապա սրտով դիմում էր Երկնային Փեսային, իսկ դևերը նույն պահին աներևույթ չքանում էին [2]: Այդ ժամանակ Կիպրիանոսը հասկացավ, որ միայն Քրիստոսի անունից և խաչի նշանից պարտվող դևերն անգոր են, և այդ ժամանակ նրա միտքը լուսավորվեց Աստծու զորությամբ: Նա մտածեց՝ եթե խաչի նշանն այդպիսի զորություն ունի, ապա որքան Խաչյալը կունենա, ապա, դարձի գալով, հրաժարվեց չարի արվեստից՝ ապավինելով փրկչին:

Վերոնշյալ երկու դարձի պատումների վերաբերյալ կարելի է մի քանի հետևություններ անել, որոնք լույս կսփռեն երևույթի թաքնված կողմերի վրա:

Առաջին հետևությունն այն է, որ նախ կոնֆլիկտ է տեղի ունենում երկու հակադիր կողմերի միջև, որտեղ մի կողմը՝ հասարակության մեջ բարձր դիրք ունեցող անձինք են. մի կողմից՝ Տրդատ թագավորը, մյուս կողմից Կիպրիանոսը ձգտում են գայթակղել անմեղության խորհրդանիշ կույսերին՝ Հռիփսիմեին և Հուստիանեին, ովքեր քրիստոնեական հավատարմության երդում են տվել: Դիմադրելով բոլոր գայթակղութ-

---

Կիպրիանոսը Խոստովանության տեքստերում թվագրվում է 350-370 թթ.: Բացի այդ Անտիոքի եպիսկոպոսների ցուցակում Կիպրիանոս անունով եպիսկոպոս չի եղել: Այս հարցը քննարկվել է 1959 թ.-ին Օքսֆորդի համալսարանում տեղի ունեցած կոնֆերանսի ժամանակ: Ի վերջո, լեգենդների պատմական ճշմարտացիության բացակայություն պատճառով Կիպրիանոսը և Հուստիանեն 1968 թ.-ին հանվել են Վատիկանի սրբերի ցանկից (սրբերի շարքին էին դասվել 4-րդ դարում):

յուններին՝ հարստության և ամուսնության առաջարկներին, կույսերն առաջացնում են տվյալ դեպքում ակնհայտ հակահերոսների ցասումը, որին անպայմանորեն հետևում են անմարդկային կտտանքները: Չարմանալիորեն, քրիստոնեական հավատի համար նահատակված վկայուհիներն են, որ դառնում են իրենց հետապնդողների հոգևոր փրկության բանալին:

Այստեղ հատկապես ուշագրավ է այս երկու բևեռների նպատակային ուղղվածությունը: Կույսերն ամեն կերպ փորձում են Աստծուն ապավինելով բարին տարածել, լուսավորել հասարակությանը և հավասարություն ու արդարություն հաստատել: Նրանց ամեն գործողություն բխում է հավատքից և միտված է այդ հավատքը տարածելուն: Տրդատ թագավորի և Կիպրիանոսի դեպքում տեսնում ենք հետևյալը: Հեթանոս թագավորը հավատում է հեթանոս աստվածների, իրեն համարում է երկրի վրա գլխավոր աստծո փոխանորդը: Անձնական դիրքի, շահի գիտակցումը և դրա գերազնահատումը, ինչպես նաև քրիստոնեական հավատի նկատմամբ նման դաժան դիմադրությունն առավելապես ներկայացվում է իբրև թագավորի խավարամտության արդյունք, մինչդեռ դարձը նրա լուսավորման և փրկության ճանապարհն է:

Կիպրիանոսի դեպքում ևս տեսնում ենք նույն ձգտումներն, ինչը Տրդատ թագավորի դեպքում: Այստեղ Կիպրիանոսն իր բոլոր հմտությունները գործի է դնում Հուստիանեին գրավելու, ում հանդեպ ևս բնազդային մղումներ ունի, բայց դատապարտվում է անհաջողության:

Երկրորդ հետևությունը այն է, որ վկայուհիների մոտ գերակայում էր անանձնականության սկզբունքը: Այս տեսանկյունից կարելի է հետաքրքիր համեմատություն կատարել կույսի և մոմի միջև: Ինչպես մոմն է վառվում կամ «ինքնազոհաբերվում», որ լուսավորի իր շուրջը, այնպես էլ կույսն է ենթարկվում չարչարանքների և նահատակվում հանուն վեհ արժեքի: Նրանց սերն առ Աստված և Նրա խոսքը տարածումը վեր էր սեփական շահից: Նրանց հիմնական ձգտումն իրենց անձից վեր կանգնած տարրի վերականգնումն էր, այդ տարրի հաղթանակը (եթե երկու հակադիր բևեռների պայքարի տեսանկյունից նայենք): Նման հաղթանակի արդյունքում միայն հասարակությունն ավելի բարի, առաքինի, բարոյական կդառնար: Եթե փորձենք այս նույն դիտանկյունից վերլուծել հակադիր բևեռի գործողությունները, ապա կտեսնենք, որ թե՛ Կիպրիանոսի, թե՛ Տրդատ թագավորի դեպքում գերակա է սեփական ես-ի գերազնահատումը, անձի կամային ինքնության բացարձակությունը: Բուրգի գլխին կանգնած է անհատը, ով գործում է հանուն սեփական շահի՝ անտեսելով հասարակության շահերը, ով իր հեղինակության պահպանումը պատկերացնում է միայն այդ կերպ: Իհարկե, վերոնշյալ գործողությունների և դրանցից բխող հետևանքների գլխավոր պատճառն անգիտությունն է, որը մարդուն դարձնում է կույր, բնազդներով առաջնորդվող, թույլ, տվյալ դեպքում՝ ինքնահաստատման կարիք ունեցող: Ինչպես Եղիշեն է ասում՝ «...և բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում անուսումնությունից: Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգիտությունը զրկում է կատարյալ



կյանքից: Լավ է աչքով կոյր լինել, քան մտքով կոյր լինել: Ինչպես որ հոգին մեծ է մարմնից, այնպես էլ մտքի տեսողությունը մեծ է մարմնի տեսողությունից» [3]:

Մյուս կարևոր հետևությունն այն է, որ Կիպրիանոսի, Տրդատ թագավորի դարձը շարունակական և անդառնալի գործընթաց է: Վերոնշյալ պատումներում կա ևս մեկ անդառնալի գործընթաց՝ վկայուհիների նվիրումը քրիստոնեական հավատին: Չկա պատմության մեջ այդպիսի դեպք, երբ կույսերն ուրանան քրիստոնեությունը և շրջվեն դեպի հեթանոսական կրոնը:

Կույսերը նաև մի շարք առանձնահատկություններ ունեին, որոնցից ամենակարևորը, թերևս, բժշկելու շնորհն էր: Վառ օրինակներից է Սուրբ Նունեն, ով քրիստոնեություն է քարոզել Վրաստանում: Սուրբ Նունենին հաջողվում է բժշկել վրաց Նանա թագուհուն, նրա զավակին ու թագավորին՝ այսպիսով ամբողջ արքունիքին բերելով հավատքի է: Նա հրաժարվում է բոլոր թանկարժեք նվերներից և քարոզում Տիրոջ Ավետարանը [6]: Իր բժկություններով հայտնի է նաև Սուրբ Երմոնե կույսը, ով հիմնում է մի բուժարան, որտեղ բժշկում է բոլոր կարիքավորներին՝ քարոզելով Տիրոջ խոսքը [7]: Այս տեսանկյունից օրինակները բազմաթիվ են:

Դարձի պատմությունների և վկայուհիների վարքը ներկայացնող պատմությունների անբաժան մասն են նաև տեսիլքները և հրեշտակները, որոնք անհրաժեշտ պահին ուղղորդում կամ փրկում էին կույսերին: Օրինակ՝ Սուրբ Եփիմիա կույսը, ում կրկին քարկոծում էին քրիստոնեական հավատին հարելու համար, չարչարում և անիվների տակ փորձում ճզմել, բայց նույն պահին երկնքից իջնում են հրեշտակները և ազատում կույսին չարչարանքից [8]:

Ամփոփելով կարելի է ասել, որ վաղ քրիստոնեական վկայուհիների շուրջ գոյություն ունեցող իրական կամ անիրական բազմաթիվ պատումները նպատակ ունեին ակնհայտ հակադրությունների ներկայացման միջոցով ընդգծել հեթանոս աշխարհի մեղսավոր, դաժան և խավար բնույթը՝ ցույց տալով Աստծո խոսքով լուսավորվելու, մաքրվելու և փրկության արժանանալու ճանապարհը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] **Ագաթանգեղոս**, Պատմություն հայոց, Երևան, 1977, էջ 67-99:

[2] **Բաբաջանյան Մ.**, Կիպրիանոս, Երևան, 2014 թ.,

URL: <http://www.irates.am/hy/1396943729> (հղումը կատարվել է՝ 07.06.2018):

[3] **Եղիշե**, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1994, էջ 59:

[4] **Ղազարյան Դ.**, Կիպրիանոս հայրապետը և Հուստիանե կույսը 15-16-րդ դդ. ժապավենաձև հմայիլների գեղարվեստական հարդարանքում, Երևան, 2014, էջ 244-8:

[5] Մաքուր և լուսե երանելի վկայուհիները, Երևան, 2013 թ.,

URL: <http://www.holytrinity.am/posts/view/941> (հղումը կատարվել է՝ 06.06.2018):

[6] **Սուզիասյան Կ.**, Սբ. Նունե և Սբ. Մանե կույսերը, Երևան, 2014 թ.,

URL: <http://www.surbzoravor.am/post/view/surb-nune-ev-surb-mane-kuyseri-hishatakutyan-or> (հղումը կատարվել է՝ 04.06.2018):

[7] Սուրբ Երմոնես և Նեկտարիոս կույսերը, Երևան, 2018 թ.,

URL: <http://www.gahana.am/am/holidays/2018-10-02/1> (հղումը կատարվել է՝ 05.06.2018):

[8] Վարք Սրբոց, Հատոր Բ, Ս. Էջմիածին, 2010 թ.,

URL: <http://www.surbzoravor.am/post/view/vkayabanutyun-surb-epimia-kuysi-ev-qrivosti-qarasuniny-vkaneri> (հղումը կատարվել է՝ 04.06.2018):

[9] **Bailey R.**, Cyprian of Antioch, McGill University (Montreal), 2009, pp. 2-4.

## Հարությունյան Ինգա

### **ՎԿԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱԼԱԾՈՂՆԵՐԻ ԴԱՐՁԸ՝ ԻՐԵՎ ԲԱՐՈՅԱԽՐԱՏԱԿԱՆ ՄԻՋՈՑ ՎԱՂ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ**

**Բանալի բառեր՝** քրիստոնեական դարձ, Հռիփսիմեան կույսեր, Կիպրիանոս, անանձնականության սկզբունք, անգիտություն, դարձի շարունակականություն:

Սույն հոդվածը վերաբերում է քրիստոնեական դարձի գաղափարաբանությանը, վերջինիս վերաբերյալ միջնադարյան հայ իրականության մեջ տարածված պատկերացումներին: Հոդվածի շրջանակներում մեր առաջ նպատակ ենք դրել հասկանալու, թե ինչն էր մարդուն ստիպում դարձի գալ, և ինչպես ստացվեց, որ վերջինս շարունակական բնույթ էր կրում: Նոր լույսի ներքո փորձել ենք հասկանալ վկայուհիների և նրանց չարչարողների՝ որպես հակադիր բևեռների միջև առկա խորը հակասությունները, և չնայած այդ հակասություններին՝ այն հանգամանքին, թե վերջիններիս ինչպես դարձի եկան: Փորձել ենք նորովի մոտենալ այս հակադիր բևեռների բնութագրիչներին, կատարվող գործողությունների դրդապատճառներին: Քանզի միայն այս ամենի ուսումնասիրության արդյունքում կարող ենք ընդհանրական պատկերացում կազմել միջնադարյան հայ իրականության մեջ բարու, բարոյականի, հասարակական բարիքի և մի շարք այլ երևույթների ու հասկացությունների մասին:

Арутюнян Инга

## **МУЧЕНИЧЕСТВО СВЯТЫХ ДЕВ И ОБРАЩЕНИЕ ИХ ГОНИТЕЛЕЙ КАК НРАВСТВЕННОЕ СРЕДСТВО К ПУТИ СТАНОВЛЕНИЯ РАННЕХРИСТИАНСКОГО ОБЩЕСТВА**

**Ключевые слова:** обращение к христианству, рипсимейские девы, Киприан, принцип монофизитства, незнание, непрерывность обращения.

Статья анализирует идеологию обращения в христианство и понимания христианства в средневековой армянской среде. Автор статьи анализирует причины обращения к христианству и непрерывность этого процесса. Особенное внимание уделяется легенде Рипсима и святых дев. Выделяются две противоположные группы людей: с одной стороны - Рипсима и мученики, с другой - их мучители и язычники.

Исследуя причины обращения, мы можем составить представление средневековых армян о добре, доблести, честности, нравах и других пониманиях в средневековой среде.

Harutyunyan Inga

## **MARTYRDOM OF HOLY VIRGINS AND CONVERSION OF THEIR PERSECUTORS AS A MORAL MEANS TO THE FORMATION OF EARLY CHRISTIAN SOCIETY**

**Key words:** conversion to Christianity, Hripsime, Cyprianus, principle of monophysitism, ignorance, continuity of conversion.

The article analyzes the ideology of Christianity conversion and understanding of Christianity in the medieval Armenian environment. The author of the article analyzes the reasons for turning to Christianity and continuity of the process. Particular attention is paid to the legend of Hripsime and holy virgins. Two opposing groups of people stand out: on the one hand, Hripsime and the martyrs, on the other, their tormentors and pagans.

Exploring the reasons for the conversion, we learn about the ideas of medieval Armenians about goodness, valour, honesty, mores and other ideas in the medieval environment.